ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

Д. Е. ЕРЕМЕЕВ, *Этногенез турок*. Изд-во „Наука", Главная редакция восточной литературы, М. 1971, 272 стр., цена 97 коп.

Թուրք ժողովրդի ծագման ու կազմավորման հետ առնչված առանձին հարցեր վաղուց արդեն գրավել են հայրենական և օտար ուսումնասիրողների ուշադրությունը։ Հրապարակի վրա է բավական ստվար մի գրականություն։ Սակայն իրենց ամբողջականության մեջ այդ հարցերը մանրակրկիտ քննության առարկա դարձան միայն վերջերս, Դ. Ե. Երեմեևի 1971 թ. Մոսկվայում հրապարակած արժեքավոր աշխատության մեջ։ Պատմական, մարդաբանական, լեզվաբանական և ազգագրական տվյալների հիման վրա հեղինակը լուսաբանում է թուրքերի ծագումը, թուրք ժողովրդի կազմավորումը, թուրքական բուրժուական ազգի ձևավորման առանձնահատկությունները։

Գիրքը բաղկացած է առաջաբանից, ուր հեղինակը հիմնականում անդրադառնում է աղբյուրների ու գրականության տեսության խնդիրներին. Աշխատության հինգ գլուխներում շարադրված են խնդրո առարկա հարցերի հետ առնչվող հիմնական նյութն ու հեղինակի եզրակացությունները։ Գիրքն ավարտվում է գրականության ընդարձակ ցանկով։ Առաջին գլխում, որը վերնագրված է «Անատոլիայի բնակչության էթնիկական կազմը մինչ թուրքական ցեղերի զանգվածային վերաբնակեցումը», քննված է Փոքր Ասիայի ժողովուրդների համառոտ պատմությունը մինչև XI դարը։ Մնացած չորս գլուխներն ընդգրկում են մի ամբողջ հարցախումբ, կապված թուրք ժողովրդի (XV—XIX դարեր) և թուրք բուրժուական ազգի (XX դար) կազմավորման հետ։

Թուրք ժողովրդի կազմավորման հետ առընչվող հարցերի մեջ հեղինակն առանձնակի ուշադրություն է դարձնում սելջուկյան նվաճումների հետևանքով առաջացած Ռումի կամ Իկոնիայի սելջուկյան սուլթանության մեջ XII—XIII դարերում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերի պատմության կնճռոտ հարցերին, ինչպիսիք են՝ XI—XII դարերում Անատոլիայում թյուրքերի քանակի ճշգրտումը, Անատոլիայի թյուրքական ցեղերի էթնիկական կազմը, Փոքր Ասիայի բնակչության էթնիկական կազմը XI—XIII դարերում, Փոքր Ասիայի այսպես կոչված սելջուկյան մշակույթի էթնիկական արմատները և այլն։

XV—XVI և հաջորդ դարերից ընդհուպ մինչև XIX դարն ընդգրկված ժամանակաշրջանին վերաբերող հարցերի մեջ առանձնապես ուշագրավ է Օսմանյան պետության կազմավորման արդյունք հանդիսացող էթնիկական նոր տեղաշարժերի հարցերի մանրակրկիտ քննարկումը։ Այստեղ հատկապես մեծ ուշադրություն է դարձված թուրքերի կողմից ստրկացված բալկանյան ժողովուրդների մի մասին դեպի Փոքր Ասիա աքսորելու և նրանց արդեն կազմավորված թուրք էթնոսի մեջ ձուլելու երևույթներին։

Աշխատության չորրորդ գլուխը, որ վերնագրված է «Թուրք ազգի կազմավորումը», նվիրված է Թուրքիայի XIX դ. 80—90-ական թթ. մինչև 1935 թ. ընկած ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության կարևորագույն հարցերին և, այդ բոլորի հիման վրա, Թուրքիայի ժողովուրդների էթնիկական փոխհարաբերությունների ոլորտում տեղի ունեցած նոր փոփոխություններին։ Հեղինակը հատուկ կանգ է առել երիտթուրքերի բուրժուական գաղափարախոսության, քաղաքական գործունեության ու ազգային փոքրամասնությունների նկատմամբ նրանց վարած շովինիստական քաղաքականության հարցերի վրա։ Գլուխը վերջանում է քեմալական հեղաշրջման հետևանքով բուրժուական թուրք ազգի վերջնական ձևավորման մասին հեղինակի եզրակացություններով։

Վերջին՝ հինգերորդ գլխում («Արդի թուրքերի էթնիկական բնութագրումը»), քննարկվում են թուրքերի մարդաբանական տիպերը, լեզուն, նյութական ու հոգևոր մշակույթի մի քանի առանձնահատկությունները և այլն։

Գրքի առաջաբանում, հեղինակը հետևելով գիտության մեջ արմատավորված տեսակետին, նշում է, որ ժամանակագրական առումով թուրքերի՝ որպես ժողովուրդ ասպարեզ դուրս գալը վստահորեն կարելի է համարել XI դարի վերջը, երբ զանգվածորեն Միջին Ասիայից թյուրքական ցեղերը (օղուզներ ու թուրքմեններ) թափանցեցին Փոքր Ասիա։ Այնուհետև հեղինակը մի անգամ ևս ընդգծում է հանրահայտ այն ճշմար-

տությունը, որ «իհարկե, չի կարելի աչքաթող անել այս տարածքի (իմա՝ Փոքր Ասիայի— Մ. Զ.) վրա թյուրքերի ավելի վաղ թափանցումը, սակայն դա այնքան պատահական էր ու աննշան իր քանակությամբ, որ հազիվ թե կարողանար որևէ վճռական դեր խաղալ Փոքր Ասիայի էթնիկական կերպարանափոխման մեջ»։ Արդի Թուրքիայի սահմաններում ապրող թուրքերը, իրավացիորեն նկատում է Երեմեևը, կազմված են «մեկը մյուսից ծայրահեղորեն տարբերվող երկու հիմնական շերտերից՝ ժամանակակից Թուրքիա տեղափոխված թյուրք քոչվոր-անասնապահների և տեղաբնիկ նստակյաց հողագործ բնակչության տարբեր խմբերից» (էջ 5)։

Հեղինակը սպառիչ ձևով օգտագործել է բազմալեզու սկզբնաղբյուրներ ու գրականություն և բնական է, որ գրքում զգալի տեղ է հատկացրել արդի թուրք պատմաբանների աշխատությունների քննական ուսումնասիրմանը։ Թուրքերի էթնոգենեզի հարցերին նվիրված աշխատություններում թուրք պատմաբանների մեծ մասը, ինչպես նշում է հեղինակը, «չխուսափեցին հիվանդագին դրույթներից, որոնք իրենց արտահայտությունը գտան անհիմն էթնոգենետիկ հայացքներում»։ Քեմալականները թուրք պատմաբանների առաջ խնդիր դրեցին «գիտականորեն հիմնավորել թուրքերի իրավունքը Փոքր Ասիայի տարածքի վրա և ապացուցել անատոլիական թուրքերի տեղաբնիկ լինելը»։ Թուրք պատմաբանները փոխանակ ցույց տալու, թե ինչպիսի էթնիկական խմբեր ձուլվեցին թուրքերի հետ պատմական տարբեր ժամանակաշրջաններում՝ սելջուկ-թուրքերի Փոքր Ասիա թափանցելուց հետո, սկսեցին կեղծել, խեղաթյուրել պատմությունը։ Եվ ահա, ի լուր աշխարհի, նրանք հայտարարեցին, որ թուրքերը Փոքր Ասիայի հնագույն ժողովուրդն են, համենայն դեպս, սկսած պալեոլիթից (հին քարե դարից)։ Թուրքերը հայտարարվեցին խեթեր, շումերներ, էլամացիներ, խուրրիներ, ուրարտացիներ, սկյութներ, միդիացիներ, պարթևներ, քրդեր և այլն և այլն։

Ինչի՞ հիման վրա են արվում նման «ուզրակացությունները»։ Պարզվում է՝ նախ և առաջ, մարդաբանության «տվյալների» հիման վրա (էջ 22—24)։ Ոտնահարելով գիտության մեջ ընդունված ու արմատավորված հետազոտական ձևերն ու մեթոդները, թուրք պատմաբաններն իրենց նպատակներին են ծառայեցնում մարդաբանության խեղաթյուրված «տվյալները»։ Թուրք պատմաբանները «թուրքեր» կամ «թյուրքական» ցեղեր սկսեցին փնտրել ամենուր, ուր հայտնաբերվում էին կարճագլուխներ (բրախիկեֆալներ)։ «Կարճագլուխ տարրերի որևէ մի տեղում երևալը,— գրում է Դ. Ե. Երեմեևը,— նրանց կողմից դիտվում էր որպես «թուրքական» մարդաբանական տիպի կամ պարզապես թուրք ժողովրդի թափանցման ու տարածման փաստ»։

Հին Արևելքի մի շարք ժողովուրդներին թուրքեր դարձնելու ոտնձգություններ կատարելիս թուրք պատմաբաններից ոմանք հենվում են «լեզվաբանական» տվյալների վրա։ Այսպես՝ թուրք պատմաբանների երկրորդ համագումարում նրանք առաջ քաշեցին գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող «արևային տեսությունը» լեզվի ծագման մասին, որի էությունը վերջին հաշվով հանգում է հետևյալին՝ Հին Արևելքի ժողովուրդների լեզուների հիմքում, իբր, ընկած է թուրքերենը։

Թուրքերի հետ ոչ մի առնչություն չունեցող Հին Արևելքի ժողովուրդներին թուրքեր հայտարարելիս թուրք պատմաբանները վկայակոչում են նաև «մշակութային ընդհանրության» գաղափարը։ Ըստ նրանց, մարդկային քաղաքակրթությունը, իբր, սկիզբ է առել Միջին Ասիայի Անաու բնակավայրում և ապա տարածվել ամբողջ Ասիայում ու Եվրոպայում։ Թուրք պատմաբաններն, այսպիսով, փորձում են իրենց նախնիներին առաջատար դեր վերագրել մարդկության պատմության մեջ։ «Այս հեղինակների շատ աշխատություններ գրված են ուրիշ ժողովուրդների նկատմամբ ունեցած գերազանցության կանխակալ դիրքերից»,— նշում է Դ. Ե. Երեմեևը (էջ 29)։

Մանրամասն շարադրելով թուրք պատմաբանների այս և նման բոլոր տեսակի կեղծ և պանթյուրքիստական մոլուցքով շաղախված տեսությունները թուրքերի ծագման մասին, գրքի հեղինակը եզրակացնում է. «Թուրքերի ծագման գիտական բացատրությունը ոչ մի ընդհանուր բան չունի պանթյուրքիստների և ազգային շովինիստների էթնոգենետիկ կեղծ դրույթների հետ» (էջ 40)։ Հիրավի, նման անհեթեթությունները ոչ մի կապ ու առնչություն չունեն գիտության հետ։ Դիտությունն այստեղ ծառայեցվում է քաղաքական նպատակներին։

Բացահայտ պանթյուրքիստական տեսակետներ արծարծվեցին հատկապես համաշխարհային II պատերազմի ու Թուրքիայում Դեմոկրատական կուսակցության իշխանության (1950—60 թթ.) տարիներին։ Անվերապահորեն մերժելով գիտության հետ առնչություն չունեցող այս տեսակետները, Դ. Ե. Երեմեևը միաժամանակ ցույց է տալիս, որ սկսած 1960-ական թթ. թուրքերի էթնոգենեզի հարցերին նվիրված աշխատություններում թուրքական պատմագրությունը աստիճանաբար հրաժարվում է թուրքերի ծագման հարցում նախկին տարիներին արված հապճեպ եզրակացություններից (էջ 20)։

Իրականության մեջ մինչև մեր թվականության

XI դարը, այսինքն՝ մինչև քոչվոր սելջուկների թափանցումը Փոքր Ասիա, երկրագնդի այս մասում հաջորդաբար պատմության ասպարեզ դուրս եկան բարձր մշակույթ ունեցող մի շարք ժողովուրդներ ու պետություններ (փռյուգիացիներ, բյուզանդիացիներ, լիդիացիներ, հետագայում՝ հույներ, հայեր և այլն)։

Պիտի նշել, որ այս հարցերին անդրադառնալիս հեղինակի շարադրանքը գիտական առումով տեղ-տեղ որոշ չափով կաղում է, որը կարող է ընթերցողին ապակողմնորոշել։ Նախ՝ ոչ մասնագետ ընթերցողը կարող է այն տպավորությունն ստանալ, որ Հայաստանը դարերի ընթացքում զուրկ է եղել պետականությունից, և որ մի նվաճողին հաջորդել է մի ուրիշը։ Օրինակի համար, բերենք հեղինակից մի հատված. «Հայ-քրդական լեռնաշխարհի հարավային մասում և Վերին Միջագետքում դեռևս մ. թ. ա. III հազարամյակում գոյություն ուներ Սուրարտու ստրկատիրական պետությունը։ Մ. թ. ա. XVIII դարում նրա տարածքում առաջացավ մի ուրիշ պետություն՝ Միտանին, որը մ. թ. ա. XV դարում նվաճվեց Ասորեստանի կողմից։ Այնուհետև այստեղ իշխեցին Աքեմենյանները, Սելևկյանները, Հին Հռոմը, Պարթևաստանը, Բյուզանդիան, Սասանյան Իրանը» (էջ 51—52)։ Ճիշտ է, հեղինակը շատ բարձր գնահատական է տալիս Տիգրան II-ի և Բագրատունյաց թագավորության ժամանակ Հայաստանի տնտեսական ու քաղաքական հզորությանը, նշելով, որ «Տիգրան II-ի (95—55 թթ. մ. թ. ա.) ժամանակ Հայաստանը դարձավ մեծ ու հզոր պետություն։ Գյուղատնտեսական զարգացման իր մակարդակով նա այդ ժամանակաշրջանի առաջավոր երկիրն էր»։ «Բագրատունիների ժամանակ,— այնուհետև գրում է նա,— Հայաստանը տնտեսական ու մշակութային վերելք ապրեց։ Պեղումների ընթացքում հայտնաբերված արհեստների ու արվեստի իրերը ցույց են տալիս, որ Հայաստանի քաղաքների մշակութային կյանքը գրտնվում էր զարգացման ավելի բարձր աստիճանի վրա, քան Արևմտյան Եվրոպայի միջնադարյան քաղաքներում» (էջ 51)։ Ստացվում է, որ Հայաստանը քաղաքական անկախություն է ունեցել միայն Տիգրան II-ի և Բագրատունիների ժամանակաշրջանում։

Այնուհետև միանգամայն անընդունելի պետք է համարել այստեղ ու այլուր հեղինակի օգտագործած նորամուծությունը՝ «Հայ-քրդական լեռնաշխարհ» հասկացողությունը։ Գիտությանը մինչև այժմ հայտնի է միայն «Հայկական լեռնաշխարհ» ֆիզիկա-աշխարհագրական և պատմական տերմինը։

Մյուս հարցը, որ գիտական վեճ ու առարկություն կարող է հարուցել, դա դարձյալ մինչև XI դարը թյուրքական ցեղերի Անդրկովկաս և Փոքր Ասիա թափանցելու հարցն է։ Նշելով, մի կողմից, թե այդ թափանցումները այնքան աննշան էին, որ չէին կարող որևէ ազդեցություն ունենալ երկրի էթնիկական կերպարանափոխման վրա, մյուս կողմից՝ հեղինակը փաստորեն հակասում է ինքն իրեն՝ գրելով. «VIII—X դարերի ժամանակաշրջանը բնորոշվում է արդեն հատկապես Միջին Ասիայից ու Խորասանից թյուրքերի ավելի մեծ քանակությամբ [Փոքր Ասիա] տեղափոխվելով» (էջ 61)։

Իրականության մեջ, սակայն, Փոքր Ասիա տեղափոխված միջինասիացի թյուրքերը Բաղդադի արաբական խալիֆների վարձկան զինվորականներն էին։ Հանրահայտ է, որ IX դարում, երբ թուլացած Արաբական խալիֆայությունը գործիք դարձավ Միջին Ասիայից եկած թյուրքական զինվորականության ձեռքին, ապա վերջիններին խալիֆաթի կողմից իկտայի (ավատի) իրավունքով շնորհվեցին որոշ հողակտորներ Տարսոնի, Ադանայի, Մարաշի, Խլաթի, Մանազկերտի և Էրզրումի շրջաններում։ Այս վայրերում երբևիցե զանգվածային թյուրքական տարր չէր բնակեցվել։ Այս հանգամանքը ստիպված է ընդունել նույնիսկ այնպիսի մի մոլեռանդ պանթյուրքիստ, ինչպիսին Զ. Տոգանն է։ Այսպես, նա գրում է. «Եթե ճանրահայտ է իրենց զինվորների գլուխն անցած որոշ թյուրք էմիրների Ադրբեջան ու Անատոլիա գալը, ապա այս վայրերում թյուրքերի հաստատվելու մասին եղած վկայությունները չափից դուրս քիչ են» (ընդգծումը մերն է— Մ. Զ.), իսկ այնուհետև, նույն Զ. Տոգանի բառերով ասած՝ «Միայն և միայն սելջուկների ժամանակ թյուրքերը առաջին անգամ տնովտեղով տեղավորվեցին Անատոլիայում» (ընդգծումը մերն է— Մ. Զ.)։

XI դարում նոր արոտավայրեր փնտրելու տենչով արևելքից Փոքր Ասիա ներխուժեցին սելջուկ-թյուրքական ցեղերը։ 1040 թ. նրանք գրավեցին Իրանը, իսկ 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո ամբողջ Փոքր Ասիան փաստորեն ընկավ նրանց տիրապետության տակ։ Հեղինակի հաշվումներով, Փոքր Ասիա ներխուժած քոչվորների թիվը սկզբում կազմել է ընդամենը 500—700 հազար մարդ, իսկ XII դարի վերջին և XIII դարի սկզբին նրանց քանակը մոտենում էր 1 միլիոնի (այս տվյալները հիմնված են «Սիասեթ-նամեի», Իբն Բիբայի և արդի թուրք պատմաբանների ուսումնասիրությունների վրա)։ Այսպիսով, Փոքր Ասիայի բնակչության հիմնական զանգվածը չարունակում էին կազմել տեղաբնիկները՝ հայերը, հույները, քրդերը և այլն։ Այդ մասին են վկայում Հեթում Պատմիչի, Վիլհելմ Ռուբրուկի, Մարկո Պոլոյի և Իբն Բաթութայի հաղորդած տվյալները։ Մար-

կո Պոլոն նշում է, որ հայերն ու հույները սելջուկների նվաճումից հետո Փոքր Ասիայի քաղաքների ու բաղաքային ավանների հիմնական բնակչությունն էին կազմում (էջ 101)։ Իբն Բաթութան իր հերթին արձանագրում է, որ Փոքր Ասիայում «շատ են քրիստոնյաները, որոնք կրտնրվում են մուսուլմանների տիրապետության տակ» (էջ 102)։ Նվաճողները Փոքր Ասիայում փոքրամասնություն էին կազմում նվաճվողների նկատմամբ, իսկ այդ մեծամասնությունը նվաճվեց Բյուզանդիայում տիրող ավատական մասնատվածության ու ավատական երկպառակությունների պատճառով։

Ահա այս ժամանակաշրջանից է, որ աստիճանաբար սկսեց տեղաբնիկների իսլամացումը, որը, ինչպես ճիշտ նկատում է հեղինակը, վերջանում էր թուրքացմամբ (էջ 105)։ Իսլամացումը մեծ մասամբ կատարվում էր բռնի, հարկադրական միջոցներով։ Փոքր Ասիայի շատ վայրերի բնակիչներ ստիպված եղան ընտրություն կատարել իսլամի ու մահվան միջև։ Հայ և հույն ավատատերերից մի մասը ավատական իրավունքներն ու արտոնությունները պահելու մտադրությամբ իրենց ենթակա բնակչության հետ անցան նվաճողների կողմը։ Այդպես վարվեց, օրինակ, հայկական ծագում ունեցող Դանիշմենդյանների իշխանությունը Սեբաստիայի շրջանում։ Ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը, օրինակ, գտնում է, որ Դանիշմենդը Ռատն է, հայ նշանավոր զորավար Լիպարիտի որդիներից մեկը[1]։

Դ. Ե. Երեմեևի գրքում շատ հաջող են շարադրված այսպես կոչված «սելջուկյան» արվեստին, «սելջուկյան» ճարտարապետությանը նվիրված էջերը։ Հեղինակը ցույց է տալիս, որ XII—XIII դարերի սելջուկյան հուշարձանները հիմնականում տեղաբնիկ ժողովուրդների, նախ և առաջ՝ հայ ու հույն վարպետների ստեղծագործությունների արդյունք են։ «Հայերի և հույների դերը XI—XII դդ. Փոքր Ասիայի արհեստներում հսկայական է»,— գրում է Դ. Ե. Երեմեևը (էջ 115) և նշում, որ «տեղական ազդեցությունը ցայտունորեն դրսևորվում է նաև սելջուկյան ճարտարապետության մեջ։ Տեղին է այստեղ հիշել ակադ. Հովսեփ Օրբելու իր ժամանակին արած դիտողությունը այսպես կոչված սելջուկյան ճարտարապետության մասին. «Սելջուկյան արվեստի համար բնորոշ ճարտարապետական կոթողները իրենց վրա կրում են ոչ միայն հայկական և վրացական եկեղեցական ճարտարապետական կառույցների ձևերը, այլ նրանց ոգեղակի փոխադրումն են»։ Այնուհետև Հ. Օրբելին նշում է. «...Ոչ մի հիմք չկա Կովկասի և Փոքր Ասիայի հին հայկական մարզերի սելջուկյան հուշարձանները դիտել որպես որևէ տեղից եկած և արվեստի նոր ձևեր բերած վարպետների ստեղծագործության արդյունք։ Ունենալով քոչվորական մշակույթ, եկվորները չէին կարող իրենց հետ բերել ո՛չ ճարտարապետություն քարի վրա, ո՛չ ուժերի ստեղծագործական լարում, որպեսզի կարողանային քարի վրա մշակել շինարարական արվեստի ու գարդարվեստի նոր ձևեր»[2]։

Սելջուկների տիրապետությունը Փոքր Ասիայում, այնուհետև թաթար-մոնղոլների նվաճումներն այս երկրամասում նպաստեցին նորանոր թյուրքական ցեղերի ներթափանցմանը (օսմանցիների նախնիներ Կայի ցեղը՝ XIII դարում, ջելայիրյանները և չորանյանները՝ XIV դարում, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերը՝ XV դարում)։ Թյուրքական քոչվոր այդ ցեղերի հոծ դանգվածները գնալով ստվարացնում էին թյուրքական տարրը Փոքր Ասիայում։ Աստիճանաբար երկրի շատ մասերում զարգացած նստակյաց հողագործությունը տեղի տվեց թյուրք քոչվորների անասնապահ տնտեսությանը։ Երկիրը անասելի տնտեսական անկում ապրեց։

XIV դարի սկզբին Բյուզանդիայի անմիջական սահմանում ստեղծված Օսմանյան բեյությունը (իշխանությունը) մի շարք նպաստավոր պայմանների բերումով գրավեց Փոքր Ասիայի ամբողջ հյուսիս-արևմտյան մասը։ XV դարի սկզբում օսմանցիները գրավեցին Բալկանյան թերակղզին, իսկ 1453 թ. գրավելով Կ. Պոլիսը, աստիճանաբար իրենց իշխանությանը ենթարկեցին փաստորեն ամբողջ Փոքր Ասիան։ XVI դարում Օսմանյան պետությունը երեք ցամաքամասերի վրա տարածված հսկա կայսրություն էր արդեն։ Օսմանյան կայսրության ստեղծումը վերջ տվեց Փոքր Ասիայի ավատական տրոհվածությանը, նպաստեց երկրի տարբեր մասերի տնտեսական կապերի ուժեղացմանը, որն իր հերթին որոշակի նախադրյալներ ստեղծեց նախկին ցեղային հարաբերությունների վերացման ու թուրք ժողովրդի վերջնական կազմավորման համար։

Տիրապետող ժողովուրդն այդ կայսրության մեջ օսմանցիներն էին։ Եթե սկզբում այդ բառի տակ հասկանում էին միայն օսմանցի ցեղին պատկանողներին, ապա հետագայում «օսմանցին» առհասարակ նշանակում էր Օսմանյան

---

[1] Տե՛ս С. Т. Еремян, Преемники полководца Липарита и вопрос о происхождении Данышмендов. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրի» (Հաս. գիտ.), 1947, № 8, էջ 67։

[2] И. А. Орбели, Проблема сельджукского искусства, Избранные труды, Ереван, 1963, էջ 364։

կայսրության հպատակ։ XVI—XVIII դարերում «Թուրք» անվանումը արհամարհական իմաստ ուներ և այդ բառի տակ հասկանում էին օսմանյան Հասարակության ցածր խավերին։ Իսլամացած և հետևաբար՝ Թուրքացած տեղաբնիկները իրենց նույնպես օսմանցիներ էին անվանում և նրանց օգտագործած լեզուն արդեն Թուրքերենն էր։

XV—XVIII դարերում Փոքր Ասիայի տեղաբնիկների իսլամացումն ու Թուրքացումը մեծ ծավալ ընդունեց, որն իրագործվում էր հետևյալ ուղիներով (էջ 145—148). ա) ճնշման ու հալածանքի պայմաններում, քրիստոնյա հպատակները, պաշտոնապես «անհավատ»— «գյավուր» անվանվածները, ստիպված են լինում երբեմն ընդունել իսլամը, մանավանդ որ օսմանցի տիրապետողները խրախուսում էին Թուլկամներին, գայթակղեցնելով նրանց տնտեսական և քաղաքական արտոնություններով. բ) նվաճված Բալկանյան երկրներում Թուրքերը բնակչության մի մասին մատնում էին ստրկության ու աքսորում դեպի Փոքր Ասիայի խորքերը, ստիպելով նրանց ընդունել իսլամ. գ) համաձուլման (ասիմիլյացիայի) մյուս ուղին դա, այսպես կոչված, «Դևշիրմեն» էր՝ Երեխաների բռնի հավաքում օսմանյան կանոնավոր բանակի՝ ենիչերիների շարքերը լրացնելու նպատակով. «Դևշիրմեն» (մանկահավաք) օրինականացված բռնություն էր, որը ակնառու կերպով ցույց է տալիս Թուրքիայում ոչ մուսուլման հպատակների ստրկական վիճակը. դ) վերջապես՝ Թուրքերը էթնիկապես խառնվում էին տեղաբնիկների հետ, իրենց հարեմներում պահելով նրանց կանանց։ Այս բոլորի հետևանքով, անգամ արդի Թուրք պատմաբանների խոստովանությամբ, կազմավորված Թուրք ժողովրդի մի զգալի մասը տեղաբնիկ շերտից էր։ Հ. Ինալչըկը արդի Թուրքերի մեջ տեղաբնիկներին համարում է 30 տոկոս, սակայն Դ. Ե. Երեմեևի կարծիքով, որը ճիշտ պիտի համարել, այդ տոկոսը անհամեմատ ավելի մեծ է (էջ 148)։

Այսուհանդերձ, XIX դարի սկզբին իրենց հավատքին ու հայրենիքին ամուր կառչած տեղաբնիկների թիվը դեռևս շատ մեծ էր կայսրության մեջ, օրինակ՝ Հայերը, ըստ Դ. Ե. Երեմեևի, կազմում էին ավելի քան երկու միլիոն (էջ 164)։ Թուրքերը, ինչպես բազմիցս ընդգծում է հեղինակը, իրենց տնտեսական-մշակութային զարգացման մակարդակով շատ ավելի ցածր էին, քան Թուրքիայի ազգային փոքրամասնությունները (էջ 166)։ XIX դարի առաջին կեսին Ս. Մարբսն ու Ֆ. Էնգելսը բնորոշում էին Թուրքիան որպես «ֆեոդալիզմի ամենացածր ու բարբարոսական աստիճանի վրա գտնվող մի երկիր։

Արտաքին աշխարհում եվրոպական պետությունների կրած պարտությունները, երկրի ներսում ծայր առած դերբեյների (ավատատերերի) անվերջ ապստամբությունները սուլթաններին ստիպեցին երկրի ներսում ու բանակում բարենորոգումներ անցկացնել։ Չնայած 1839 և 1856 թթ. սուլթանական հրովարտակները բարենորոգումների մասին (Գյուլխանե-ի խաթթ-ի շերիֆ և խաթթ-ի Հումայուն) մնացին թղթի վրա, սակայն որոշ նպաստավոր պայմաններ ստեղծեցին բուրժուական հարաբերությունների ստեղծման համար։ Եվ դարձյալ ազգային փոքրամասնությունների (հայերի և հույների) ներկայացուցիչներն էին, որոնք նպաստում էին երկրի բուրժուական բարգավաճմանը։ «Հայերի և հույների մոտ բուրժուազիայի և բուրժուական հարաբերությունների հետագա զարգացումը,— գրում է Դ. Ե. Երեմեևը,— հասցրեց այն բանին, որ բուրժուական ազգի ձևավորման տնտեսական նախադրյալները առաջացան ոչ թե Թուրք ժողովրդի, այլ այս ճնշված ազգային փոքրամասնությունների մոտ» (էջ 156)։ Ազգային փոքրամասնությունների մոտ բուրժուական հարաբերությունների զարգացումը հանգեցրեց բուրժուական ազգությունների առաջացման պրոցեսին, ու հետևաբար ազգային զարթոնքի։ Ճնշված ազգերի ազգային-ազատագրական շարժման վերելքը XIX դարի երկրորդ կեսին կատաղի թշնամությամբ ընդունվեց սուլթանիզմի կողմից։ Ինչպես արդարացիորեն գրում է Դ. Ե. Երեմեևը. «քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ Աբդուլ Համիդը վարեց անզուսպ շովինիստական քաղաքականություն... Աբդուլ Համիդը որոշեց «վերջ տալ հայկական հարցին, վերջ տալով հայերին» (էջ 190—199)։ Այնուհետև հեղինակը նշում է, որ «Համիդիե» գունդը «սկսեց սիստեմատիկորեն ջարդել ու ոչնչացնել հայերին այն վիլայեթներում, ուր նրանք մեծամասնություն կամ բնակչության զգալի տոկոսն էին կազմում... Այս բոլորի հետևանքով տեղի ունեցավ կոտորած, որի ժամանակ սպանվեցին հարյուր-հազարավոր հայեր» (էջ 199)։

Երիտթուրքերը, անցնելով իշխանության գլուխ, պանթյուրքիզմն ու պանիսլամիզմը դարձրեցին պաշտոնական գաղափարախոսություն։ Նրանք անհաշտ դիրք գրավեցին ազգային փոքրամասնությունների նկատմամբ։ Երիտթուրքերի կենտկոմի 1911 թ. նիստի որոշման մեջ սևով սպիտակի վրա գրված էր. «Կայսրությունը պետք է մուսուլմանական դառնա... Այլ ազգություններին չպիտի թույլ տալ յուրահատուկ ազգային կազմակերպություններ ունենալու իրավունք... Թուրքերեն լեզվի տարածումը մուսուլմանների գերիշխանության տարածման և այլ ազգությունների ձուլման լավագույն միջոց

է» (էջ 201)։ «Պատերազմի տարիներին,— գրում է Դ. Ե. Երեմեևը.— երիտթուրքերը փորձեցին իրականացնել երկրի ներսում իրենց պանթյուրքիստական և պանիսլամիստական նպատակները՝ ոչնչացնելով ոչ մուսուլման ազգային փոքրամասնություններին։ Մասամբ դա նրանց հաջողվեց։ Օգտվելով պատերազմական վիճակից, երիտթուրքերը գերմանական գլխավոր շտաբի խորհրդով սկսեցին Արևելյան Անատոլիայից (իմա՝ Արևմտյան Հայաստանից— Մ. Զ.) հայ բնակչության տեղահանումը։ Զոհվեցին մեկ և կես միլիոն հայեր»,— գրում է Դ. Ե. Երեմեևը (էջ 204—205)։

Թուրքական բուրժուական ազգը ձևավորվեց քեմալականների ժամանակ։ Միայն քեմալականների ժամանակ է, որ «ազգայնականության» սկզբունքը, թուրքական ազգին պատկանելու գիտակցությունը եկավ թուրքերի մոտ փոխարինելու իսլամիզմի և օսմանիզմի սկզբունքներին» (էջ 207)։ «Ազգային փոքրամասնությունների նկատմամբ,— գրում է Դ. Ե. Երեմեևը,— [քեմալական] կառավարող շրջանները հենց սկզբից վարեցին թուրքացման քաղաքականություն։ 1924 թ. սահմանադրության 88-րդ հոդվածը Թուրքիայի սահմաններում ապրող բոլոր քաղաքացիներին թուրքեր էր համարում։ 1961 թ. սահմանադրության 84-րդ հոդվածը դարձյալ բոլոր քաղաքացիներին թուրքեր է ճանաչում։ Այստեղից էլ հեղինակը եզրակացնում է. «Ընդհանրապես, Թուրքիայի արդի ազգային տեղաշարժերի մեջ տիրապետող միտումը թուրքերի կողմից ազգային փոքրամասնությունների ձուլումն է թուրք ազգի մեջ» (էջ 217)։

Անշուշտ, դժվար է մի գրախոսականի սահմաններում քննել այն բոլոր հարցերը, որոնք արծարծված են Դ. Ե. Երեմեևի գրքում։ Առավել ուշադրություն դարձրեցինք աշխատության գլխավոր ու էական հարցերին։ Շոշափված նյութից ակնհայտ է, որ գործ ունենք գիտական խոշոր նշանակություն ունեցող մի աշխատության հետ։ Ընդհանուր առմամբ գիրքը գրված է գիտական ու մեթոդոլոգիական ճիշտ ու առողջ դիրքերից և ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ։

Ցանկալի կլիներ այդ գիրքն ունենալ նաև հայերեն թարգմանությամբ։

Մ. ԶՈՒԼԱԼՅԱՆ

Г. Л. АРШ, Этеристское движение в России, М., 1970, 372 стр., цена 1 р. 72 коп.

Բալկանների, մանավանդ Հունաստանի նոր պատմության մի շարք հանգուցային հարցերի գիտական լուսաբանության ուղղությամբ վերջին տարիներին զգալի աշխատանք է կատարել սովետական պատմաբան Գրիգորի Լվովիչ Արշը[1]։ Նրա նոր ծավալուն ուսումնասիրությունը, որ լույս տեսավ Հունաստանի հեղափոխության 150-ամյակի նախօրյակին, նվիրված է Օդեսայում ստեղծված հունական ընդհատակյա «Ֆիլիկի հետերիա» կազմակերպության Ռուսաստանում ծավալած յոթնամյա (1814—1821) գործունեությանը։

Գ. Լ. Արշը հանգամանորեն ուսումնասիրել է հրապարակի վրա գտնվող փաստական հարուստ նյութը, օգտագործել է Բալկաններում և Ռուսաստանի հարավային մասերում ծավալված ազատագրական-հեղափոխական շարժումներին նվիրված սովետական պատմաբանների ուսումնասիրությունները, հրապարակ է հանել և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրել սովետական արխիվներում պահվող չափազանց արժեքավոր փաստաթղթերը «Ֆիլիկի հետերիայի» և նրա գործիչների մասին։ Դրա շնորհիվ նա ստեղծել է հունական հեղափոխական կազմակերպությանը և առհասարակ Ռուսաստանում հետերական շարժմանը նվիրված լիամփոփ մի աշխատություն, որ կարևոր ներդրում է սովետական պատմագրության մեջ՝ օսմանյան լուծը Հունաստանում տապալելու պատմությունը դիտականորեն լուսաբանելու տեսակետից։

Ամենից առաջ Գ. Լ. Արշը մանրամասն անդրադառնում է հետերական շարժման նախապատմությանը, լուսաբանում տնտեսական և սոցիալ-քաղաքական այն իրադրությունը, որ գոյություն ուներ Հունաստանում օսմանյան լծի տիրապետության տվյալ ժամանակաշրջանում՝ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին։ Թուրքական դաժան հարստահարության պայմաններում թե՛ Հունաստանում և թե՛ հունական գաղթավայրերում, մասնավորապես Կ. Պոլսում, կազմավորվել էր հունական առևտրական բուրժուազիան, որը լայն կապերի մեջ էր մտել հարևան երկրների, մասնավորապես Ռուսաստանի հետ։ Հույն ժողովուրդը, դիմակայելով սուլթանական ծանր ան-

---

1 Գ. Լ. Արշի գրչին են պատկանում գիտական հանդեսներում և տարբեր ժողովածուներում հրատարակված մի շարք ուսումնասիրություններ, ինչպես նաև „Албания и Эпир в конце XVIII—начале XIX в.“, М., 1963, „Тайное общество „Филики этерия“, М. 1965 և դրախոսվող աշխատությունները։